«Սիմոնա» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկի բազալտների հանքավայրի «Արևելյան» տեղամասում 2022-2024 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

06.12.2022թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք, Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում 2022 թվականի դեկտեմբերի 1-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «Սիմոնա» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկի բազալտների հանքավայրի «Արևելյան» տեղամասում 2022-2024 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Աստղիկ Վարդանյանը, «Սիմոնա» ՍՊԸ ներկայացուցիչներ՝ Արսեն Փիրյանը, Սաթենիկ Գևորգյանը, «Ընդերք» ՍՊԸ տնօրեն՝ Սահարոն Գևորգյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Բացման խոսքով հանդես եկավ Կապան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 200 համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջերի հայտարարությունների բաժնում (www.env.am, www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Աստղիկ Վարդանյանին:

Զեկույց (Աստղիկ Վարդանյան-«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ)- «Ընդերք» ՍՊԸ ընկերությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել նախնական գնահատման հայտը, որը օրենքի համաձայն հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեություն, իրականացվում է 1 փուլով՝ 2 հանրային քննարկումներով: Մինչ հանրային լսում իրականացնելը հայտը ներկայացվում է մի շարք գերատեսչություններին՝ արտակարգ իրավիճակի, առողջապահության,

կրթության և մշակույթի նախարարություններ, կադաստրի կոմիտե, Սյունիքի մարզպետարան, որպեսզի ստանանք տվյալ հայտի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հայտը ուղարկվում է լրամշակման: Լրամշակված հայտը ստանալուց հետո իրականացվում է ծանուցում համայնքին ՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ. 1325-Ն որոշման համաձայն: Հանրային լսումը իրականացվում է բնապահպանական ռիսկերը (օդ, ջուր, հողային ռեսուրսներ, աղմուկ և այլն) քննարկելու, մեղմացման ուղիներ փնտրելու համար:

Զեկույց (Սահարոն Գևորգյան- «Ընդերք» ՍՊԸ տնօրեն)- Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են գյուղից 1 կմ դեպի արևելք, նախկին շլաքի հանքավայրի անմիջապես կողքը: Դաշտային աշխատանքները տևելու են ընդամենը 15-20 օր: Նախատեսվում է հորատել թվով 4 հորատանցքեր, մինչև 15 մ խորությամբ, ընդամենը 60 գծ. մ ծավալով: Կլինեն 4 հորատման հարթակներ, որոնցից յուրաքանչյուրը՝ 40 մ^2 տարածքով: Նախատեսված է նաև փորձնական հանույթ մինչև 150 մ^3 : Այնուհետև նմուշները կուղարկվեն լաբորատոր ուսումնասիրության: Դրական արդյունքի դեպքում արդեն կհաշվարկվեն պաշարները, կներկայացվեն հաստատման: Փորձնական բաց հանքը կզբաղեցնի 50 մ^2 , որը ևս նմուշները վերցնելուց հետո կհարթեցվի, կբերվի նախկին տեսքի: Հորատման հաստոցի, բուլդոզերի բնականոն աշխատանքից փոշի և ծուխ կլինի: Քանի որ, բնակավայրից 1-1,5 կմ հեռավորության վրա է, ապա որևէ բացասական ազդեցություն չի թողնի բնակչության վրա: Ինչ էլ, որ այս փուլում քանդվի, կվերականգնվի, նույն տեսքի կբերվի: Իսկ հետագայում՝ պաշարները հաստատվելուց հետո, կհանդիպենք, կլինեն ևս 4 հանրային լսումներ և այդ գործընթացը կշարունակվի մինչ շահագործման թույլտվություն ստանալը:

Հարց (Գոռ Թադևոսյան- Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ)-Ե՞րբ է նախատեսվում սկսել աշխատանքները:

Պատասխան (Սահարոն Գևորգյան)-15 օրվա ընթացքում ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից կստանանք եզրակացություն՝ դրական կամ բացասական և 1 ամիս էլ կտևի մինչ տարածքային կառավարման նախարարությունից ստանանք թույլտվություն: Այսինքն աշխատանքները կսկվեն 2 ամսից ոչ շուտ:

Խոսք (Անուշավան Հարությունյան-Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավար)- Ցանկալի կլինի, որ աշխատողները գյուղից լինեն, ինչպես նաև օգնություն ցուցաբերվի գյուղին՝ կլինի փոսալցման, թե այլ գործերի տեսքով:

Պատասխան (Սահարոն Գևորգյան)- Այս փուլում չէ, իսկ 2-րդ փուլում մոտ 15 աշխատող հնարավոր է, որի մասին թող հաստատեն ընկերության լիազորները:

Պատասխան (Արսեն Փիրյան-«Սիմոնա» ՍՊԸ ներկայացուցիչ)- Այո, աշխատողներ գյուղից կլինեն:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Երբ, որ ընկերությունը շահագործման հայտ կներկայացնի, մենք դեռ կունենանք հանրային լսումներ, կքննարկենք: Ընկերությունը հաստատեց, որ շահագործման փուլում պլանավորում է համապատասխան մասնագետներ լինելու դեպքում ներգրավել աշխատակիցներ նաև գյուղից:

Լրացում (Աստղիկ Վարդանյան)- Դեռ ունեք ժամանակ, որ 5 օրվա ընթացքում ներկայացնեք Ձեր գիտողություններն ու առաջարկությունները լիազոր մարմնին, որից հետո

կտրվի եզրակացություն: Հայտով ներառված բնապահպանական միջոցառումները նախաձեռնող կողմը պարտավորվում է իրականացնել, իսկ եթե դրանք չբավարարեն կամ չհամապատասխանեն այդ պարագայում որպես հավելում նախատեսվում են նոր բնապահպանական միջոցառումներ:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Շնորհակալություն բոլորին մասնակցության համար: Համարում եմ հանրային քննարկումը կայացած: Կարծում եմ դրական է այն փաստը, որ պետք է երկրաբանահետախուզական ուսումնասիրություններ կատարվեն: Իսկ երբ, որ ընկերությունը հայտ կներկայացնի շահագործման հետ կապված՝ կլինեն նորից հանրային քննարկումներ:

Հանրային քննարկման պատասխանատու
Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

Ձեռնարկող՝
«Սիմոնա» ՍՊԸ տնօրեն **Անի Սիմոնյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Հանրային քննարկման արձանագրող՝
Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**